

**ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.**

**ԱՆՑՅԱԼԻ ԴԱՍԵՐԸ ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

Խորհրդային կայսրության փլուզումը բավականին բարդ և անպատասխան հարցեր առաջադրեց նորանկախ Հայաստանին, որի քաղաքական (այն ժամանակ դեռևս անփորձ) ղեկավարությունը ձեռնամուխ եղավ հասարակական կյանքի բազմակողմանի բարեփոխումներին: Կատարվեցին առաջին քայլերը ազատ շուկայի ստեղծման ուղղությամբ, որոնցից կարևորագույնն էր հողի նկատմամբ պետական սեփականության մենաշնորհի վերացումը:

Դեռևս 1991 թվականին՝ սկսելով ագրարային ռեֆորմը, 1992 թվականի հունվարից անցում կատարելով որակապես նոր տնտեսական հարաբերություններին, իրականացնելով պետական իշխանության լրջագույն ինստիտուցիոնալ բարեփոխումներ, Հայաստանը համեմատաբար ուշ ձեռնամուխ եղավ դատախիրավական ոլորտում արմատական բեկմանը:

Բարեփոխումներն այս ոլորտում այսօր ընթանում են մեծ ուժով և դրանով է պայմանավորված դեմոկրատական ինստիտուտների հետագա զարգացումը և ավանդույթների արմատավորումը Հայաստանում:

Հայաստանի իրավական համակարգի ամենաէական ռեֆորմը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումն էր 1995 թվականին համաժողովրդական քվեարկությամբ: Սահմանադրությունը ոչ միայն էականորեն փոփոխեց Հայաստանի սահմանադրական կարգի հիմունքները, այլև նախանշեց իրավական և դատական համակարգերի բարեփոխումների հետագա ընթացքը:

Դատախիրավական բարեփոխումների ուղղվածության հարցը հատկապես կարևոր է նոր դեմոկրատիայի երկրների համար, քանի որ իշխանության դատական թևն այստեղ նոր է թևակոխում կայացման փուլ և դեռևս շատ հեռու է հասարակության մեջ օրինականության և արդարության երաշխավորի դերից: Հետևաբար, կախված նրանից, թե ինչ ուղղվածություն կունենան բարեփոխումները, պարզ կլինի, թե որքանով է ռեալ մոտ ապագայում երկրում ունենալ գործուն և անկախ դատական իշխանություն:

Ինչով է թելադրված բարեփոխումների անհրաժեշտությունը:

Ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքը իշխանությունների տարանջատման սկզբունքն է, որը զսպամանների և հակակշիռների համակարգի միջոցով երաշխավորում է, որ իշխանության որևէ թև դուրս չի մնա վերահսկողությունից և հնարավորություն չի ունենա գերակայել մյուսների նկատմամբ: Այս մեխանիզմների գործունակության ապահովման գործում անգնահատելի է դատական իշխանության դերը: Դատարաններն են ի վերջո որոշում, ինչն է օրինական և ինչն է ոչ օրինական, որն է ճիշտ և որը սխալ տվյալ պետության օրենքների համաձայն: Սակայն սա հնարավոր է միայն այն դեպքում, երբ դատական համակարգը իսկապես համարվում է իշխանություն, այսինքն պետության դատական համակարգը համապատասխանում է այն բարձր պահանջներին և չափանիշներին, որոնք մշակվել են քաղաքակիրթ հանրության կողմից և շարադրված են «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի 14 հոդվածում:

Այն, որ նախկին դատական համակարգը և դատավարական մեխանիզմներն ի վիճակի չէին սպասարկել ազատ շուկայական տնտեսությունը, անվիճելի է: Իրավական համակարգը, հատկապես քաղաքացիաիրավական ոլորտը հարմարեցված էր տնտեսության պլանային դրվածքին, դատավարությունը կրում էր ինկվիզիցիոն բնույթ:

Հայաստանի օրենսդրական դաշտին բնորոշ էր այն իրավիճակը, որը հատուկ էր նախկին ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների համար՝ հասարակական հարաբերությունների գերակշիռ մասը կարգավորվում էր ենթաօրենսդրական ակտերով: Գործում էին սակավաթիվ օրենսգրքեր և օրենքներ, իսկ մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ ակտերի մեծ մասը ընդունվում էին նախարարությունների և գործադիր իշխանություն իրականացնող այլ մարմինների կողմից: Հատկանշական է, որ այդ ակտերի գերակշիռ մասը հասու չէր հանրությանը, իսկ ոստիկանության և օպերատիվ-հետախուզական այլ մարմինների գործունեությունը կարգավորող ակտերը ոչ միայն չէին հրապարակվում, այլ կրում էին գաղտնի բնույթ:

Իրավական համակարգի բարեփոխումների կարևորագույն ուղղությունը մարդու իրավունքների և ազատությունների, ինչպես նաև

քաղաքացիների և պետական մարմինների փոխհարաբերությունների ողջ կոմպլեքսի օրենքով կարգավորելու նպատակն էր:

Դատավարությունը Հայաստանում մինչև 1999 թվականի օրենսգրքերի ընդունումը ըստ էության կրում էր ինկվիզիցիոն բնույթ, որտեղ էականորեն նվազեցված էին կողմերի իրավունքները և հնարավորությունը ռեալ մրցակցելու միմյանց հետ: Այս փաստը ոչ միայն բացասաբար էր անդրադառնում գործով ապացույցների ձեռքբերման, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտության վրա, այլև իրական հնարավորություններ էր ստեղծում անմեղության կանխավարկածի խախտման համար:

Փաստ է, որ Հայաստանում տեղի ունեցան լուրջ դատաիրավական բարեփոխումներ: Սահմանադրությունը սահմանեց նոր, դատական որակապես այլ համակարգ, որը էականորեն տարբերվում էր նախկին երկաստիճան համակարգից:

Այս նոր համակարգի կառուցման հիմնաքարերը դրեց Սահմանադրությունը, որի 38 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք»: Նույն այդ հոդվածը հռչակեց Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը:

Դատաիրավական բարեփոխումների հիմնական ուղղությունների ուրվագծման համար որոշիչ նշանակություն ունեցավ նաև Սահմանադրության 39 հոդվածը, համաձայն որի. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք»:

Չնայած սահմանադրական այս կողմնորոշիչների առկայությանը, դատաիրավական բարեփոխումների ընթացքը եղել է բավականին բարդ:

Բարեփոխումների ծրագրի և դրանք ապահովող հիմնական օրենքների և օրենսգրքերի մշակման աշխատանքների ղեկավարումը սկզբնապես իր վրա էր վերցրել խորհրդարանի պետական-իրավական հարցերի հանձնաժողովը: Այստեղ նշանակություն ունեին ինչպես սուբյեկտիվ հանգամանքները (երկրի ներքաղաքական իրավիճակը),

այնպես էլ այն փաստը, որ այս ժամանակահատվածում կառավարության քաղաքական կամքը հստակ չէր և նա պատրաստ չէր վերցնել իր վրա դատաիրավական բարեփոխումների պատասխանատվությունը: Կայացող դեմոկրատիայի երկրներում պառլամենտական կամ այլ քաղաքական ճգնաժամը ցավոք սրտի կարող է անմիջական ազդեցություն ունենալ բարեփոխումների ընթացքի վրա, իսկ երբեմն անգամ բարեփոխումների ճակատագրի վրա: Եթե դրան ավելացնենք նաև այլ հավելյալ գործոնները, մասնավորապես կոռուպցիան, գործընթացի տարբեր մասնակիցների շահերը և այլն, ապա պարզ է դառնում, թե ինչ կարևորություն են ստանում սահմանադրական կանխորոշիչները: Դժվար է պատկերացնել բարեփոխումների ճակատագիրը, եթե Սահմանադրությունը չնախատեսեր բարեփոխումների իրականացման ժամկետները, դատարանակազմության ինստիտուցիոնալ հիմունքները, դատական համակարգի գործունեության հիմնական սկզբունքները: Այդ ուղղություններով երկխոսություններն ու բանավեճերը հավանաբար կշարունակվեին մինչ օրս:

Իսկ ինչպիսի հավելյալ բացասական գործոններ են ազդել և այսօր էլ ազդում են դատաիրավական բարեփոխումների ընթացքի վրա: Թերևս դրանք բազմաթիվ են, բայց ես կխոսեմ դրանցից կարևորագույն մի քանիսի մասին:

Առաջինը դա կոռուպցիան է:

Կոռուպցիան որպես ցանկացած երկրի հասարակական կարգի հիմքերը խարխլող գործոն, հանդիսանում է ոչ միայն հասարակական հարաբերությունների լճացման հիմք, այլ նաև բարեփոխումների, այդ թվում նաև դատաիրավական բարեփոխումների, արգելակող գործոն:

Հայաստանյան հասարակության կոռումպացվածության որոշակի աստիճանը չէր կարող և այսօր էլ չի կարող չազդել իրավական բարեփոխումների գործընթացի վրա: Սա ունի իր հստակ բացատրությունը՝ կոռումպացված պետական մեքենան շահագրգռված չէ ստեղծելու այնպիսի դատաիրավական համակարգ, որը կարող է ի վիճակի լինել պաշտպանելու քաղաքացուն այդ նույն մեքենայի կամայականություններից:

Կոռուպցիան ունի խոր արմատներ: Այդ արմատների բավականին հստակ բացատրությունը և հայաստանյան

հասարակությունում նրա դեմ պայքարի ուղղությունների հիմնավոր մոտեցումները առաջադրեց 1999թ. հոկտեմբերի 27-ին պառլամենտի շենքում ահաբեկչական գործողությունների գոհ դարձած Հայաստանի նախկին վարչապետ Վազգեն Սարգսյանը՝ ժողովրդին ուղղված իր հեռուստաելույթում: Նա ասում էր. «Կոռուպցիան երևի հավերժական պրոբլեմ է: Դրա դեմ մարդկությունը միշտ պայքարել է: Միջազգային հանրությունը այսօր կոռուպցիան համարում է նույնքան վտանգավոր որքան տեռորիզմը: Միջազգային տարբեր կազմակերպություններ այսօր մշակում են կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրեր: Կոռուպցիան կա աշխարհի բոլոր երկրներում, բոլորն էլ դրա դեմ պայքարում են: Սակայն որոշ երկրներում ուր երկիրն ու տնտեսությունը ոտքի կանգնեցնելու խնդիր կա, կոռուպցիան վերածվել է աղետի և խոչընդոտում է երկրի զարգացմանը: Ահա այս վիճակն է այսօր Հայաստանում: Կոռուպցիան լիովին վերացնել այսօր անհնար է: մեր խնդիրն է կրճատել դրա ծավալները, հասցենելով գոնե այն աստիճանի, որ չխանգարի երկրի զարգացմանը: Կոռուպցիան Հայաստանում ունի նաև օբյեկտիվ պատճառներ՝ աղքատություն, երկրաշարժի և ետպատերազմյան հետևանքներ, օրենսդրական դաշտի անկատարություն, աշխարհագրական դիրք: Եթե լինեինք Գերմանիայի կամ Շվեյցարիայի հարևանը, դժվար թե կոռուպցիան այսպիսի մասշտաբներ ունենար: Մյուս կարևորագույն օբյեկտիվ պատճառը պատմական ժառանգությունն է: Սովետական վերջին տասնամյակների պատմությունը ինչ-որ առումով երկրի լիակատար կոռումպացման պատմություն է և այդ հոգեբանությունը մեկ օրում չես փոխի: Այս առումով կոռուպցիայի դեմ պայքարը բարդանում է, բայց Հայաստանում հնարավոր է իրական պայքար, քանի որ մեզանում կոռուպցիան համակարգված և մոնոպոլիզացված չէ: ... Ինչ է կոռուպցիան: Ընդհանուր մի սահմանմանմամբ այն հնարավոր չէ բնորոշել, այն ամենատարբեր դրսևորումներն ունի՝ կաշառակերություն, կաշառատվություն, հովանավորչություն: Կաշառակերությունն այսօր Հայաստանում տարածված է: Սակայն երկրի զարգացմանը այսօր հատկապես խոչընդոտում է հովանավորչությունը: Այսպես կոչված «տանիքների» արատավոր ավանդույթը խանգարում է ազատ զարգացմանը: Այս պայմաններում ինչպես կարող ես համոզել քաղաքակիրթ, օրինական դաշտում գործող խոշոր կապիտալին, գալ Հայաստան, ներդրում անել: Հետևաբար կոռուպցիայի խնդիրը չի կարելի դիտարկել միայն հանցավորության դեմ պայքարի կոնտեքստում: Սա քաղաքական խնդիր է: Առանց կոռուպցիայի և

կաշառակերության դեմ իրական պայքարի հնարավոր չէ ձևավորել նաև առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ հասարակության մեջ:» - վերջ մեջբերմանը...

Պետական իշխանության բոլոր մակարդակներում կոռուպցիան արմատախիլ անելու համար ամենակարևոր պայմանն է երկրի ղեկավարության հստակ քաղաքական կամքը: Հարմարվողական վերաբերմունքը կոռուպցիայի դրսևորումների նկատմամբ պետական իշխանության մարմիններում չեն կարող արդարացվել ոչ մի քաղաքական, տնտեսական կամ որևէ այլ շահի հասկացությամբ: Չհաղթահարելով հանցավորությունը իր մեջ, պետությունը չի կարող դրանից պաշտպանել քաղաքացուն:

Կոռուպցիան իր հետ բերում է նաև բազմաթիվ հավելյալ խոչընդոտող գործոններ: Եթե պետական ապարատում առկա է կոռումպացվածության որոշակի մակարդակ, ապա դրանից չի կարող զերծ մնալ նաև դատական իշխանությունը:

Իսկ դատական համակարգի կոռումպացված շրջանակները, բնականաբար չեն կարող հանդուրժել համակարգի այնպիսի բարեփոխումներ, որոնք փակում են կոռուպցիայի ճանապարհը կամ խոչընդոտներ ստեղծում նրա համար:

Նախկին դատական համակարգի դիմադրությունը բարեփոխումներին զգացել են բոլոր նրանք, ովքեր այս կամ այն կերպ ներգրավված են եղել այդ գործընթացում: Իսկ ինչպիսի հանգամանքներ կարող էին ազդել այդ նեգատիվ վերաբերմունքի ձևավորմանը: Դրանք կարելի է դասակարգել հետևյալ կերպ՝

- համակարգի ավանդական պահպանողականությունը,
- իրավական ավանդույթները,
- ինկվիզիցիոն դատավարության համակարգը,
- բարեփոխումների սուբյեկտիվ ընկալումը:

Գաղտնիք չէ, որ հասարակությունը միշտ դժվարությամբ է ընկալում փոփոխությունները, իսկ ռեֆորմները միշտ մարտահրավեր են հասարակությանը: Կոնկրետ դեպքում խնդիրը առավել բարդ է, քանի որ գործ ունենք բավականին պահպանողական համակարգի հետ: Իրավական ավանդույթները, որոնք արմատավորվել են տասնամյակներով խորհրդային ռեժիմի պայմաններում, բացառում էին

կոմպրոմիսը քաղաքակիրթ հասարակության իրավական առաջադեմ գաղափարների հետ: Ինկվիզիցիոն դատավարության ավանդույթները ինտերցիայով փոխանցվում էին իրավաբանների մի սերնդից մյուսին, և հաճախ դատավորներին նույնիսկ ձեռնտու էր աշխատել նման համակարգում:

Ինչ վերաբերում է սուբյեկտիվ գործոններին, դա առաջին հերթին դատավորների մեծ մասի վախն էր կորցնելու իր դիրքը նոր դատական համակարգում, և հետևաբար նաև հասարակությունում:

Բարեփոխումների գործընթացին խոչընդոտող հանգամանք էր նաև գործադիր իշխանության որոշ մարմինների դիմադրությունը, ինչը ևս ուներ իր հիմքերը: Դրա ակնառու օրինակը դատախազության լիազորությունների հետ կապված խնդիրն էր: Այս հարցն ունի բավականին երկար պատմություն: Դրա նախապատմությունը սկսվում է դեռևս Սահմանադրության նախագծի մշակման ժամանակահատվածից, որը էականորեն կրճատեց դատախազության ազդեցությունը քաղաքացիաիրավական շրջանառության ոլորտում՝ վերացնելով «ընդհանուր հսկողության» բոլորիս քաջ հայտնի գործառույթը:

Կրկին անգամ այս հարցը բարձրացվեց «Դատախազության մասին» օրենքի նախագծի մշակման ժամանակ, երբ դատախազության՝ պետական շահերի պաշտպանության հայցի հարուցման սահմանադրական լիազորության շրջանակներում փորձ էր կատարվում վերակենդանացնել ընդհանուր հսկողության գործառույթը:

Որևէ լուրջ բարեփոխում ենթակա է ձախողման առանց հասարակության լայն շերտերի օժանդակության: Սա լրջագույն պրոբլեմ է, որը պետք է լուծել մինչև բարեփոխումների գործընթացն սկսելը: Այսինքն, հասարակության աջակցությունը պետք է ապահովել ի սկզբանե:

Կարելի է արձանագրել, որ նոր դատական համակարգի կազմավորման գործընթացը առանձնահատուկ հասարակական աջակցություն չի ունեցել Հայաստանում: Միննույն ժամանակ չի արձանագրվել նաև հասարակական դիմադրություն այս գործընթացին: Հասարակությունը ընդհանուր առմամբ եղել է լոյալ այդ բարեփոխումների նկատմամբ:

Դրա հիմնական պատճառը դատական համակարգի նկատմամբ անվստահությունն է, որը մասամբ փոխանցվել է նաև դատաիրավական բարեփոխումների արդյունքներին:

Ցավոք անվստահության հատկանիշներ դատական համակարգի նկատմամբ նշմարվում են նաև այսօր, ի նկատի ունեմ հետբարեփոխումային ժամանակահատվածը:

Համաշխարհային Բանկի առաքելության օժանդակությամբ անկախ փորձագետների կողմից անցկացված հասարակական հարցման արդյունքների համաձայն հասարակությունը լուրջ կասկածներ ունի արդարադատություն իրականացնողների անաչառության և ազնվության նկատմամբ: Հարցմանը մասնակցողների 26 տոկոսը դժվարացել է պատասխանել դատավորների անհատական հատկանիշներին վերաբերվող հարցմանը: Կոնկրետ հատկանիշների թվից ամենամեծ տոկոսը բաժին է հասել «բարեկրթությանը» /25 տոկոս/ և «արհեստավարժությանը» /22 տոկոս/: «Ազնվությանը» որպես մասնագիտական հատկանիշ հայկական դատավորների համար, նախապատվություն են տվել են հարցմանը մասնակցողների 2 տոկոսը:

Դժվար է չհամաձայնվել իրավիճակի անմխիթար լինելու մասին կարծիքին:

Ստեղծված իրավիճակի պատճառները պարզ են և հասկանալի:

Առաջին պատճառը դա իրավական ինֆորմացիայի բացակայությունն է կամ անբավարարությունը:

Երկրորդը կոռումպացվածության հատկանիշների արտահայտությունն է դատական համակարգում, որը լուրջ բացասական հետք է թողնում հասարակական կարծիքի վրա:

Եվ վերջապես, դա դատական համակարգի և զանգվածային լրատվության միջոցների հարաբերությունների կոնցեպցիայի բացակայությունն է, որի հետևանքը այդ երկու կարևոր ինստիտուտների համագործակցության բացակայությունն է:

Զանգվածային լրատվության միջոցների օժանդակությունը բարեփոխումներին կարևոր է ոչ միայն ինքնին, այլ նաև անգնահատելի է որպես հասարակական օժանդակության վրա ազդող գործոն:

Դրա ապացույցն է այն դերը, որը վերապահում է հասարակությունը զանգվածային լրատվամիջոցներին՝ դատաիրավական համակարգի մասին տեղեկանալու և իրավական



քարոզչության գործում: Սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների համաձայն բնակչության իրավական տեղեկատվության 87%-ի աղբյուրը զանգվածային լրատվամիջոցներն են, և միայն մնացած մասը բաժին է ընկնում դատական համակարգին, պետական ապարատին և շրջապատին:

Այդ նույն հասարակական հարցման տվյալները ցույց են տալիս, որ բնակչության մեծ մասը տեղեկացված չէ դատախրավական բարեփոխումների մասին /42 տոկոս/ կամ գիտե դրանց մասին շատ մակերեսորեն /47 տոկոս/:

Իր իրավական տեղեկացվածության մասին ցածր գնահատական է տալիս է հենց ինքը բնակչությունը: Այսպես, հինգ բալանոց սանդղակով՝ բնակչության 60 տոկոսը գնահատում է իր իրավական գիտելիքները 1-ից 2 բալ:

Այսպիսի պայմաններում մտածել հասարակության և զանգվածային լրատվության միջոցների էական օժանդակության մասին դատախրավական բարեփոխումներին, նշանակում է չպատկերացնել օրվա իրողությունները:

Չնայած այս ոչ այնքան հուսադրող իրողություններին, հարկ էմ համարում խոսել բարեփոխումների դրական արդյունքների մասին, որոնք կան, որոնք քիչ չեն և որոնք հուսադրող են բարեփոխումների շարունակականության ապահովման առումով:

Ինչպիսի արդյունքներ է ունեցել դատական համակարգը անցած երկու տարիների ընթացքում:

Առաջին արդյունքը ակնհայտ է՝ դատական նոր՝ եռաստիճան համակարգին հաջողվեց առանց ցնցումների շարունակել արդարադատության գործառույթի իրականացումը:

Հաջորդ կարևորագույն արդյունքը դատական իշխանության վրա գործադիր իշխանության ազդեցության լուրջ կրճատումն էր: Դատական համակարգը ստացավ ոչ միայն բյուջետային և ֆինանսական ինքնուրույնություն, այլ նաև մանրամասն օրենսդրական կանոնակարգման ենթարկվեցին արդարադատության նախարարի լիազորությունները՝ դատավորների կարգապահական պատասխանատվության առումով:

Երրորդ, նկատվեցին դրական տեղաշարժեր հասարակության վերաբերմունքի առումով դատական իշխանության նկատմամբ:

Այսպես, 1999թ. առաջին 9 ամիսների ընթացքում առաջին ատյանի դատարաններում հարուցվել են 22 183 քաղաքացիական գործեր, այն ժամանակ երբ 1997թ. այդ նույն ժամանակահատվածում այդ թիվը կազմել է 15568, իսկ 1998թ-ին՝ 15443:

Վիճակագրական այս տվյալները վկայում են դատական իշխանության նկատմամբ վստահության որոշակի բարձրացման մասին:

Չորրորդ, դատական իշխանությունը ձեռք բերեց իշխանության ինքնուրույն ճյուղի ատրիբուտներ, մասնավորապես, ստեղծվեց դատական իշխանության ինքնակառավարման կենտրոնական մարմինը՝ Դատարանների նախագահների խորհուրդը:

Եվ վերջապես, օրենսդրական և գործնական կիրառում ստացան դատավորների անկախության այնպիսի կարևոր երաշխիքներ, ինչպիսիք են՝ անփոփոխելիությունը, գործունեության նյութական և սոցիալական երաշխիքները /այս վերջին հանգամանքը կարելի է ձեռքբերում համարել վերապահումով, քանի որ մի շարք օրենսդրական պահանջներ առ այսօր կյանքի կոչված չեն/:

Հնարավոր չէ ունենալ արդյունավետ դատա-իրավական համակարգ, եթե երկրում զարգացած չէ փաստաբանության ինստիտուտը: Փաստաբանության դերը նախկին համակարգում իջեցված էր նվազագույնի, և փաստաբանները կատարում էին ընդամենը պարզ միջնորդի դեր կողմի և դատավորի միջև: Նոր դատավարական օրենսդրությունը արմատապես փոխեց իրավիճակը՝ հավասար պայմաններ ստեղծելով քրեական դատավարությունում պաշտպանական և մեղադրական կողմերի համար, քաղաքացիական դատավարությունում հայցվորի և պատասխանողի համար: Անցումը մրցակցային դատավարության ապահովեց փաստաբանների պատշաճ մասնակցությունը ապացույցների հավաքման և գնահատման գործընթացին, իսկ «Փաստաբանական գործունեության մասին» օրենքը սահմանեց անհրաժեշտ նախադրյալներ անկախ փաստաբանական կորպորացիաների ձևավորման և զարգացման համար:

Դատաիրավական համակարգի բարեփոխման կարևոր քայլերից էր դատական ակտերի հարկադիր կատարման համակարգի բարեփոխումը: Առանձին դատարաններին կից գործող դատական կատարածուների անարդյունավետ համակարգը վերափոխվեց

կենտրոնացված կառույցի գործադիր համակարգի ներսում, ինչը կտրուկ բարելավեց այս ոլորտում ստեղծված անմխիթար վիճակը: Բավական է ընդամենը նշել, որ ի տարբերություն նախկին դատական համակարգի գործունեության վերջին տարվա ցուցանիշների, գույքային բռնագանձումների վերաբերյալ դատական ակտերի կատարման արդյունավետությունը բարձրացել է գրեթե 10 անգամ: Բացի այդ, դատարանները ազատվեցին իրենց ոչ հարիր գործառնությունից:

*օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կատարման պատասխանատվությունը պետք է կրի գործադիր իշխանությունը:*

Ի տարբերություն դատական համակարգի բարեփոխմանը, իրավական բարեփոխումները տևական, եթե չասենք պերմանենտ գործընթաց են ենթադրում, համենայնդեպս Հայաստանի պարագայում: Իրավական բարեփոխումները թեև ընթացել են բավականին ակտիվորեն, սակայն պետք է նկատենք, որ այս պրոցեսը համակարգված և սիստեմավորված բնույթ չի կրել: Երկրում չի եղել մեկ օրենսդրական կենտրոն, որը կարող էր մշակել օրենսդրական քաղաքականության հիմնադրույթները, իսկ կառավարությունը որևէ անգամ ձեռնամուխ չի եղել Հայաստանի օրենսդրության զարգացման հայեցակարգի մշակմանը: Այսօր դա հրամայական անհրաժեշտություն է:

Ընդամենը մեկ օրինակով կարելի է ցույց տալ նման կոնցեպցիայի բացակայության կործանարար հետևանքները մեր իրավական համակարգի համար: Գրեթե բոլոր հիմնարար օրենքներն ու օրենսգրքերը մշակվել են տարբեր միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների փորձագետների աջակցությամբ, սակայն ընդհանուր քաղաքականության բացակայության հետևանքով իրավական դաշտում հայտնվում են օրենքներ, որոնք բնորոշ են տարբեր իրավական համակարգերին: Օրենքների մի մասը մշակվել են Եվրոպական կամ մայրցամաքային իրավական համակարգի սկզբունքներով, մյուս մասը Անգլոցենտրիկ, կամ անգլոամերիկյան, իսկ մի մասն էլ իրավունքի Ռուսական դպրոցի սկզբունքներից և կանխորոշիչներից ելնելով: Ակնհայտ է, որ օրենքների այսպիսի «վինեգրետ»-ից կազմված իրավական դաշտը բարենպաստ չէ ոչ տնտեսական կյանքի համար, ոչ իրավական պետության կայացման գործընթացի համար:

1999 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտավ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրքը, որը լուրջ առաջընթաց էր քաղաքացիաիրավական հարաբերությունների

կարգավորման և բնականոն գույքային շրջանառության ապահովման տեսանկյունից: Օրենսգրքի կիրարկման ուժով առաջ եկան բազմաթիվ նոր իրավահարաբերություններ, նոր ինստիտուտներ, կատարելագործման և լուրջ փոփոխությունների ենթարկվեցին նախկինում գործող քաղաքացիաիրավական ինստիտուտները: Չնայած Հայաստանի Սահմանադրությունը չի նախատեսում օրգանական օրենքների առկայություն, մենք հույս ունենք, որ գույքային շրջանառության ոլորտը համապարփակ կանոնակարգող այս օրենքը վերջ կդնի քաղաքացիական և տնտեսական հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտերի խառնաշփոթին:

Նմանատիպ իրավիճակ ենք ակնկալում նաև քրեական և քաղաքացիական դատավարությունների ոլորտներում:

Հայաստանի Հանրապետության՝ եվրոխորհրդին անդամակցելը նոր հնարավորություն է բացում մեր երկրում դատա-իրավական բարեփոխումների խթանմանը, լրացուցիչ հնարավորություններ ստեղծում միջազգային իրավունքի նորմերի և համընդհանուր ճանաչում ստացած սկզբունքների հիման վրա մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2000 թվականի հունիսի 28 թիվ 221 որոշմամբ արձանագրվել է Հայաստանի պարտավորությունը՝ հարգել մի շարք հանձնառություններ, այդ թվում դատա-իրավական բնագավառում: Համաձայն որոշման 4-րդ կետի, Հայաստանը պարտավորվել է շարունակել դատաիրավական բարեփոխումները, մասնավորապես դատավորների անկախության կատարյալ ապահովման առումով:

Դատավորի անկախության կարևորագույն նախապայման է նրա ընտրության օբյեկտիվ չափանիշների սահմանումը, ինչպես նաև ընտրության բուն մեխանիզմի թափանցելիության և անաչառության ապահովումը: Ինչ օրենսդրական հիմքեր կան այսօր Հայաստանում նշված խնդրի լուծմանը հասնելու համար: Գործող «Արդարադատության խորհրդի մասին» օրենքն ընդհանրապես չի անդրադարձնում այս հարցերին, իսկ արդարադատության նախարարության կանոնադրությունը, որտեղ հատուկ բաժին է նախատեսված դատավորների պաշտոնեական պիտանիության և ծառայողական

առաջխաղացման ցուցակների նախապատրաստման կարգին, այն պատշաճ իրավական ակտը չէ, որը պետք է կարգավորի նմանատիպ լուրջ խնդիր: Թերևս միանշանակ կարելի է ասել, որ օրենսդրական հիմքերն այս հարցում անբավարար են: Ցավոք, Ազգային ժողովում մերժվեց ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնությունը՝ «Բարձրագույն իրավաբանական որակավորող հանձնաժողովի մասին» օրինագծի տեսքով: Այս օրենքի խնդիրը պետք է լիներ, մասնավորապես, դատավորների պաշտոնեական պիտանիության և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվելու համար անհրաժեշտ որակավորման պահանջների մշակումն ու ընդունումը, դատավորների պաշտոնեական պիտանիության և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընգրկվելու հավակնություն ունեցող անձանց որակավորման ստուգումը և համապատասխան վկայագրի հանձնումը: Այս մոդելը կարող էր հանդիսանալ դատավորների թեկնածուների հարաբերականորեն անաչառ համակարգի ներդրման ապահովման գրավականը, ի նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ այդ մարմինը լինելու էր Հանրապետության Նախագահի կողմից կազմավորվող անկախ հանձնաժողով: ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված դատավորների նշանակումների հատուկ կարգի հետ միասին այս համակարգը միգուցե գործեր բավականին արդյունավետ: Ինչ վերաբերում է բուն նշանակումների ընթացակարգին, ապա այստեղ խնդիրն առնչվում է արդարադատության խորհրդի՝ որպես սահմանադրական ինստիտուտի դերի վերաիմաստավորման անհրաժեշտության հետ: Արդյոք ճիշտ են ընտրված խորհրդի կազմի համամասնությունները, արդյոք կա անհրաժեշտություն խորհրդի կազմում ունենալու դատախազ անդամներ և հետևապես իմաստավորված են արդյոք խորհրդի լիազորությունները կապված դատախազության համակարգի կադրային խնդիրների հետ, և վերջապես արդյոք ընդունելի չէ այս մարմինը սուկ դատական համակարգի ինքնակառավարման մարմին դարձնելու գաղափարը, որի կազմում կլինեն բացառապես դատավորներ:

Դատավորների անկախության հիմնահարցը ուղղակիորեն առնչվում է մեկ այլ խնդրի հետ: Խոսքը դատավորների կարգապահական պատասխանատվության և նրանց լիազորությունների դադարեցման հարցին է վերաբերում:

Որոշ օրենսդրական երաշխիքներ թերևս սահմանված են «Դատավորի կարգավիճակի մասին» օրենքում: Մասնավորապես,

կարգապահական պատասխանատվության հիմքերի օրենսդրական ամրագրումը, դատավորի իրավունքը ծանոթանալու իր նկատմամբ հարուցված վարույթի նյութերին մինչև դրանք արդարադատության խորհուրդ ուղարկելը և լրացուցիչ բացատրություններ տալու և այլն: Ամենակարևոր դրույթը թերևս օրենքի 31 հոդվածի երկրորդ մասով սահմանված դրույթն է, համաձայն որի. «Դատական ակտը բեկանելը կամ փոփոխելն ինքնին չի առաջացնում այդ ակտը կայացրած դատավորի պատասխանատվություն, եթե արդարադատություն իրականացնելիս նա թույլ չի տվել օրենքի կանխամտածված խախտում կամ անբարեխղճություն, որն էական հետևանքներ է առաջացրել»:

Այսօրվա արդարադատության նախարարության առաքելությունը նոր դատական իշխանությանը «ծնունդ տալուց հետո» պետք է լինի նրան հասցնելը մինչև կայուն հասունացման վիճակի: Այս իրավիճակին հասնելու ռեալ հիմքերն այսօր առկա են և մեծ ցանկության դեպքում խնդրի լուծմանը կարելի է հասնել կարճ ժամանակահատվածում: Դրանից հետո գործադիր իշխանության խելամտությունը կայանալու է հովանավորի կարգավիճակից հեշտությամբ հրաժարվելու կարողության մեջ:

Քաղաքակիրթ հասարակությունում արդարադատության նախարարությունը կոչված պետք է լինի դառնալու հաղորդակցման ուղի իշխանության դատական և գործադիր թևերի միջև և ոչ երբեք դատական իշխանության խնամակալ: Այս ճշմարտությունը չըմբռնելը կամ ըմբռնել չցանկանալը հղի է դատական իշխանության կորստյան վտանգով:

2000 թվականի մարտի յոթին ՀՀ Ազգային ժողովը վավերացրեց Համաշխարհային բանկի և ՀՀ կառավարության միջև կնքված վարկային պայմանագիրը՝ որով նախատեսվում է լուրջ ներդրումներ իրականացնել դատաիրավական բարեփոխումների ապահովման ուղղություններով:

Վարկային ծրագիրը ուղղված է դատական իշխանության գործունեության իրականացման պաշտպանությանը և իրավական համակարգի բարելավմանն ուղղված Հայաստանի կառավարության ջանքերին:

Հայաստանի դատական համակարգը ընդհանուր առմամբ պաշտպանում է այդ ծրագրում ամրագրված հայեցակարգը, բայց

համարում է, որ պետք է ակտիվացնել տարբեր պետական մարմինների և ինստիտուտների գործունեությունը բարեփոխումների գործընթացի շարունակման ուղղությամբ:

Այսօր անհրաժեշտություն կա դատական համակարգի հետագա բարեփոխման, այդ գործընթացին կայուն փուլային բնույթ տալու՝ նպատակ ունենալով շարունակել քայլերը իրավական պետության կայացման ճանապարհին, քանի որ միայն իրավական պետությունը կարող է ապահովել երկրի կայուն զարգացումը, նրա ընթացքը զարգացման ճանապարհով:

Ներկայումս դատարանները գտնվում են ծանրագույն ֆինանսական պայմաններում, զգացվում է որակավորված մասնագետների խիստ պակաս: Առաջին ատյանի դատարանները ծանրաբեռնված են գործերով, որի արդյունքում դատական ընթացակարգերը չափից ավելի են ձգձգվում: Ձևավորվել է դատական ակտերի չկատարման կամ ձգձգման անթույլատրելի պրակտիկա: Այս ամենը էապես ազդում է դատական իշխանության հեղինակության վրա:

Մոտ ապագայում դատա-իրավական բարեփոխումների հիմնական խնդիրներն են հանդիսանալու դատական իշխանության օրենսդրական բազայի ձևավորման շարունակությունը, Սահմանադրության անմիջական գործողության պրակտիկայի զարգացումը՝ առաջին հերթին քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում, իրավական համակարգի հետագա կատարելագործումը՝ հիմնականում ձեռնարկատիրական գործունեության բնագավառում:

Այս առումով առաջնահերթ քայլեր են համարում՝

- դատական համակարգի օրենսդրական բազայի մշակման աշխատանքների ավարտումը (Քրեական օրենսգրքի, Վարչական օրենսգրքի, Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքի և մի շարք այլ օրենքների նախագծեր):

- մահապատժի՝ որպես պատժատեսակի վերացումը, բացառությամբ պատերազմի կամ պատերազմի անմիջական սպառնալիքի դեպքերում կատարված հանցագործությունների:

- մասնագիտացված դատարանների հարցի վերջնական լուծումը՝ մասնագիտացված վարչական և տնտեսական դատարանների ստեղծման ճանապարհով.

- դատական համակարգի գործունեության արդյունավետության և դատավարության մակարդակի բարձրացումը՝ դատավարության ձևերի կատարելագործման և դիֆերենցման ճանապարհով.

- Արդարադատության խորհրդի սահմանադրական կարգավիճակի փոփոխությունը, նրա կազմի համամասնության փոփոխությունը՝ այն դատական ինքնակառավարման մարմին դարձնելու ճանապարհով.

- դատական համակարգի կադրային ապահովումը՝ ուսուցման և վերապատրաստման արդյունավետ և ժամանակակից մեխանիզմների ներդրման ճանապարհով.

- դատական վարչարարության արդյունավետ համակարգի ներդրումը՝ ողջ դատական համակարգի համար մեկ միասնական կենտրոնացված վարչական մարմնի ստեղծման ճանապարհով.

- մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ուժեղացումը՝ ՀՀ Մահմանադրության և միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին համապատասխան.

- դատավորների անկախության և անփոփոխելիության սահմանադրական սկզբունքի լիարժեք կենսագործումը՝ համապատասխան օրենսդրական և նյութական երաշխիքների ստեղծման ճանապարհով.

- իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքի լիարժեք կենսագործման ապահովումը՝ պետության կողմից այդ պարտավորության լիարժեք ֆինանսական ապահովման ճանապարհով.

- սնանկության վերաբերյալ օրենսդրության կատարելագործումը, սնանկության գործընթացի արդյունավետ մեխանիզմների ներդրումը, մրցութային կառավարիչների լիցենզավորման ինստիտուտի ստեղծումը.

- «բարոյական վնասի փոխհատուցման» ինստիտուտի ներդրումը՝ ՀՀ քաղաքացիական օրենսդրության մեջ համապատասխան լրացում կատարելու ճանապարհով: Քաղաքակիրթ հասարակությունում պետք է պաշտպանված լինեն ոչ միայն նյութական բարիքները, այլ նաև քաղաքացու ներքին հավասարակշռվածությունը՝ հոգեկան կայունությունը և ֆիզիկական բնականոն վիճակը: Կյանքը, առողջությունը, հոգեբանական բարեկեցությունը՝ ահա թե ինչ հիմքի



վրա կարող են իրոք զարգանալ հասարակական և տնտեսական հարաբերությունները: Այս բարիքների պահպանումն է խթանում արդար, մրցունակ շուկայի, և հետևաբար ողջ երկրի զարգացումը.

- տնտեսական վեճերի լուծման արդյունավետության բարձրացումը՝ դատավարական արդյունավետ մեխանիզմների օրենսդրական ամրագրման ճանապարհով.

- իրավական մասնագիտության հասարակական կարևորության բարձրացումը, իրավական կրթության մակարդակի բարձրացումը ընդհանուր պարտադիր կրթական համակարգում.

- ձեռնարկատիրության ոլորտը կանոնակարգող հիմնարար օրենքների մշակումն ու ընդունումը (բաժնետիրական ընկերությունների մասին, գրավի մասին և այլն):

Դատաիրավական բարեփոխումների հետագա շարունակման հիմքը նրանց հասարակական անհրաժեշտությունն է և դեմոկրատական պրոցեսների անշրջելիությունը:

Տեղին է մեջբերել մի հատված 19-րդ դարի կեսերին Ռուսաստանում ընթացող դատաիրավական բարեփոխումների վերաբերյալ ցար Ալեքսանդր 2-րդի հրամանագրից.

“ԲՈՐԲՎՏՅՐԱՉ ԲՌԻՒ ԽՐՏԱՍՅՕ, ԾՕ ՎՈՒՏՊՈՒՎ, ՎՅՏ ՏՎՈՒ ՉՄՏԱՎԱ ԲՏՏՅՉԱՅԻՅՅԳՅԸ ԶԱՍՈՎՈՒ ԾՈՔԱՎԿԵ ԶՏՊՉՏՐՈՅՖ Զ ՀՏԻՐՈՒՐԵՐ ԲԳՊ ԲՍՏՐՕՌ, ԽՐՈՉՕՌ, ՎՈՒՏՐՅՈՒՉՕՌ ՌԻ ԲՈՉՎՕՌ ՊՍԵ ՉԲԱՒ ԽՏՊՊՈՎՎՕՒ ՎՈՔՈՒ, ՉՏԶՕՐՈՅՖ ԲԳՊԱՊՎԵՂ ԶՍՈՐՅՖ, ՊՈՅՖ ԱՌ ՎՈՊԱՍՁՈՔԵ ԲՈՎՏՐՅՏՆՅԱՖՎՏՐՅՖ ՌԻ ԶՏՏՈՔԱՅ ԳՅՉԱԲՐՊՈՅՖ Զ ՎՈՐՏՊԱՅ ՎՈՔԱՎ ՅՏ ԳՉՈՁԱՎՈՒԱՅ Ս ԶՈՍՏՎԵ, ՈՎԶ ՍՏԱՂՏ ՎԱՉՏԶՎՏՉՎՏ ՏՈՔԱՐՅՉԱՎՎՏԱ ՈՍՆՅՐՅՐՅՏՆՎՈՒԱՅ ՌԻ ՍՅՏՐՏԱՅ ՊՏԱՁՎՏ ՈՅՅՖ ԽՏՐՅՏՆՎՎՕՎ ԲԵՍՉՏՊՈՅԱՍԱՎ ՊԱՌՅՉՈՒՌ ՉԲԱՒ ՌԻ ՍՈՁՊՏՂՏ, ՏՅ ՉՕՐՔԱՂՏ ՊՏ ՎՈՒՋՔԱՂՏ”.

Հիրավի, այս խոսքերը արդիական են նաև այսօր:

**Հովհաննես Մանուկյան**  
*ՀՀ տնտեսական գործերով  
վերաքննիչ դատարանի նախագահ*